ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1908-1914ԹԹ.)

Սուրեն Մանուկյան

Ցանկացած ցեղասպանության իրականացման համար չափազանց կարևոր նախապայման է բնակչության մեծ զանգվածների ներգրավումը սպանության գործընթաց: Հայոց ցեղասպանության կազմակերպիչները դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը քայլեր ձեռնարկեցին Օսմանյան կայսրության հարյուր հազարավոր մուսուլմանների հավաքագրումը հայերին ոչնչացնելու գործընթացի մեջ ապահովելու ուղղությամբ:

Այս պարագայում վճռական նշանակություն էր ձեռք բերում ցեղասպանական միջավայրի ձևավորումը: Այս ամբողջ գործընթացը տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումից քիչ անց, երբ նոր իրավիճակը թույլ տվեց ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հասարակությունն առավել ընկալունակ դարձրին ատելության գաղափարների տարածման նկատմամբ: Իր հերթին հայ բնակչությունը, տրվելով երիտթուրքերի կարգախոսներին, կորցրեց զգոնությունը և անպատրաստ գտնվեց գալիք արհավիրքին դիմագրավելու համար: Առաջին աշխարհամարտը հարմար առիթ ընձեռեց այս ամբողջ գործընթացը բյուրեղացնելու համար: Իթթիհադական կուսակցության վերնախավը, օգտագործելով պետական ամբողջ ռեսուրսները՝ նյութական, կազմակերպչական, ուժային և քարոզչական, ներգրավեց այս «նախագծի» մեջ կայսրության գրեթե ամբողջ մուսուլմանական բնակչությանը[1]:

Մեր կողմից փորձ է արվել կառուցվածքային վերլուծության ենթարկել Օսմանյան կայսրությունում ձևավորված ցեղասպանական միջավայրը, մասնավորապես առանձնացնել ու դրա բաղադրիչները: Այս փուլերի բաժանումը, իհարկե, խիստ պայմանական բնույթ ունի: Յուրաքանչյուր փուլ կարող է համընկնել և փոխլրացվել մեկ այլ, կամ մի քանի այլ փուլերի հետ, որոշ փուլերը երբեք հանդես չեն գալիս «մաքուր» տեսքով, սակայն կարծում ենք, որ առանձնացման այս փորձը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական հասկանալու հակահայկականության ձևավորման և այն ցեղասպանական բնույթի վերածելու ամբողջ խորքային գործընթացները, որոնք ընթանում էին օսմանյան հասարակությունում Հայոց ցեղասպանության նախօրեին:

«Մշակութային արմատներ»

Ցեղասպանական միջավայրի ձևավորումը մեկ օրում տեղի չի ունենում, այն երկարատև ձևավորված վերաբերմունքի, կարծրատիպերի և մոտեցումների մի ամբողջություն է, որը պայմանական կարելի է անվանել «մշակութային արմատներ»:

---

[1] Հասարակության մասնակցության տարբեր աստիճանների մասին տե՛ս Մանուկյան Ս., Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ, «*Ցեղասպանագիտական հանդես*», 2(2014), էջ 100-126:

Տարբեր ցեղասպանությունների ժամանակ հասարակությունները տոգորված են լինում դարավոր ատելությամբ որոշակի թիրախ խմբերի նկատմամբ, ինչը համապատասխան պայմանների առկայության դեպքում տանում է դեպի զանգվածային սպանություններ: Նման երևույթի մասին է խոսում իր վիճահարույց գրքում պատմաբան Դանիել Գոլդհագենը, ով շեշտում է մի հատուկ հակասեմականության մասին, որը Գերմանիայի բնակչության մեջ առաջացրել էր հրեաներին մահվան դատապարտելու անհրաժեշտության մասին համոզմունք[2]: Նման պատկերն էր ձևավորվել Օսմանյան կայսրության թուրք բնակչության մի զգալի հատվածի մեջ հայերի նկատմամբ:

Երկար ժամանակ հայերի վերաբերյալ գոյություն ունեին երեք հիմնական կարծրատիպեր, որոնց հիման վրա էլ կառուցվեցին հակահայկական քարոզչության հաջորդ աստիճանները: Հայերը մուսուլմանական պատկերացումներում հանդես էին գալիս իբրև «անհավատներ», իբրև ստորադասներ և իբրև հնարավոր զոհեր:

ա. Հայերն իբրև «անհավատներ»

Հակաքրիստոնեական տրամադրությունները բավականին տարածված էին Օսմանյան հասարակությունում: Հայերը առօրյա կյանքում հաճախ պիտակավորվում էին իբրև «անհավատներ»՝ «գյավուրներ», և պատահական չէ, որ դա օգտագործվում էր կոտորածներ կազմակերպելու համար: Օրինակ՝ 1909 թ. Ադանայի ջարդի ժամանակ մուսուլմանական հոգևորականները հատուկ կրոնական հրովարտակ՝ ֆեթվա հաստատեցին այն մասին, որ իսլամն ընդունում էր քրիստոնյաների սպանությունը, ինչը մեծապես դյուրացրեց ամբոխին հայերի սպանության գործընթաց ներգրավելու գործը[3]: Երբ Օսմանյան կայսրությունը երկու անհաջող՝ Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմների ժամանակ պարտվեց «քրիստոնյա» պետություններից, դա անդրադարձավ նաև երկրի ներսում ապրող քրիստոնեական բնակչության նկատմամբ թշնամանքի աճի վրա[4]: Ավելին, թեև Հայոց ցեղասպանության ճարտարապետները տոգորված չէին կրոնական զգացումներով[5], սակայն նրանք նույնպես շատ լավ հասկանալով, որ մուսուլմանական հասարակության մեջ իսլամը կարող է դառնալ լավագույն գործիքը հասարակության մեծ մասին համա-

---

[2] Goldhagen Daniel Jonah, *Hitler's Willing Executioners: Ordinary Germans and the Holocaust*, New York, Vintage Books, 1997, p.14.

[3] Տե՛ս Duckett Ferriman, *The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909*, Yerevan: The Armenian Genocide Museum-Institute, 2009, էջ 16-17, Ադոսիդես Ա., *Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները*, Երևան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011, էջ 16:

[4] Տե՛ս Փափազյան Վ., *Իմ հուշերը*, II, Բեյրութ: Համազգային, 1952, էջ 155:

[5] Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, New York and Oxford: Berghahn Books, 1995, p. 5: Մորգենթաուն նաև նշում է, որ Թալաաթին իսլամը բոլորովին չէր հուզում, և ընդհանրապես կուսակցության բազմաթիվ առաջնորդներ արհամարհանք էին տածում ցանկացած դավանանքի հանդեպ: Նա հաճախ էր կրկնում. «Ես ատում եմ բոլոր քահանաներին, ռաբբիներին ու խոջաներին» (Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, NY: Doubleday, Page & Company, 1918, p. 20).

խմբնելու համար, Առաջին Աշխարհամարտի հենց սկզբին՝ 1914 թ. նոյեմբերի 14-ին, օգտագործեցին «սրբազան պատերազմի» ջիհադի հայտարարումը:

Որպես արտաքին թշնամիների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ պայքարի միջոց՝ այն այդքան էլ արդյունավետ չգտնվեց, սակայն ուղղեց կայսրության բնակչության կրոնական ֆանատիզմը դեպի «ներքին թշնամիներ»: Այն դարձավ չափազանց լավ միջոց ցեղասպանությունն իրականացնելու համար: Ջիհադի հայտարարումը տվեց սպանություններին յուրատեսակ կրոնական լեգիտիմացում: Հետագայում կարելի է տեսնել՝ ինչպես հենց կրոնական կարգախոսների ներքո և կրոնական գործիչների առաջնորդությամբ էին հաճախ տեղերում իրականացվում հայերի կոտորածները:

բ. Հայերը որպես ստորադասներ

Օսմանյան կայսրության մեջ ֆունդամենտալ իրողություններ մեկ խմբի՝ թուրքերի գերիշխանությունը և մեկ այլ խմբի՝ հայերի /նաև այլ քրիստոնյաների/ ենթակայությունը: Այս անհավասարությունը հիմնավորվում էր իսլամի իրավական համակարգով, որը ոչ մահմեդական հպատակներին ստորադասում էր մինչև երկրորդ կարգի քաղաքացիների կարգավիճակի[6]: Միլլեթների համակարգը ճանաչում էր ոչ մուսուլմանների իրավունքը դավանելու սեփական կրոնը, սակայն քրիստոնյա «զիմմիները»[7] տարբեր ձևերով հարստահարվում էին: Օրինակ՝ նրանց արգելված էր զենք կրել և ձի հեծնել, նրանց խոսքը դատարանում չուներ նույն կշիռը, ինչ մուսուլմանի խոսքը: Նույնիսկ հատուկ եզրույթ՝ «ռայա»[8], ներմուծվել էր պաշտոնական փաստաթղթեր քրիստոնյային նկարագրելու համար[9]: Հայերի տները մշտապես ավելի բարձր էին հարկվում, հողերը բռնազավթում էին: Ամենօրյա ճնշումները, հայ

---

[6] Տե՛ս Adalian Rouben Paul, "The Armenian Genocide," in *Centuries of Genocide: Essays and Eyewitness Accounts*, edited by Samuel Totten, William S. Parsons, and Israel W. Charny, London and New York: Routledge, 2004, էջ 60–62:

[7] Զիմմի (արաբ.՝ պայմանագրի մարդիկ), մուսուլմանական պետություններում այլակրոն (հատկապես քրիստոնյա և մովսիսական) համայնքներին պատկանող հպատակներ: Անվանումն առաջացել է արաբական արշավանքների ընթացքում (VII դարում), երբ նվաճողները որոշ ժողովուրդների թույլատրեցին դավանել իրենց կրոնը: Արաբները պաշտպանում էին այդ ժողովուրդների կրոնական համայնքները՝ պայմանով, որ նրանք հպատակվեն իրենց, օգնեն «անհավատների» դեմ մղվող «սրբազան» պատերազմում և գլխահարկ վճարեն:

[8] Ռայա (արաբ.՝ հպատակներ, հոտ), սկզբնական շրջանում այսպես էին անվանում պետության բոլոր հպատակներին, հետագայում այս անվանումը ստացավ վիրավորական բնորոշում և օգտագործվում էր միայն քրիստոնյաների նկատմամբ:

[9] Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Setian Shahkeh Yaylaian, *Humanity in the Midst of Inhumanity*, Bloomington, IN: Xlibris Corporation, 2011, էջ 91; Melson Robert F., *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago: University of Chicago Press, 1992, էջ 249; Balakian Peter, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*, New York: HarperCollins, 2003, էջ 40–43; Bat Ye'or, *Islam and Dhimmitude: Where Civilizations Collide*, Madison and Teaneck, NJ: Fairleigh Dickinson University Press, 2001, էջ 372:

գյուղացու նկատմամբ կիրառվող բռնության տարբեր ձևերը ստեղծում էին Օսմանյան կայսրության հայկական բնակչության մշտական ճնշման իրավիճակ[10]:

Հոգեբանական տեսակետից ամենավտանգավորն այն փաստն էր, որ այլ խմբի իրավունքների բացակայություն ընկալվում էր իբրև բնականոն իրավիճակ, բնական երևույթ: Այն չէր քննարկվում, չէր դառնում բանավեճի թեմա, և երբ ինչ-որ մեկը փորձում էր սասանել այդ համակարգը, դա դառնում էր զարմանքի և վրդովմունքի աղբյուր, որին սովորաբար հետևում էր հաստատված համակարգին մարտահրավեր նետած խմբի նկատմամբ ագրեսիան[11]: 1908 թվականից հետո հարաբերությունները հայերի և թուրքերի միջև պաշտոնապես փոփոխվում են սահմանադրությամբ, սակայն ամենօրյա կյանքում այս փոփոխություններն ընդամենն ավելացնում էին առանց այդ էլ բարդ փոխհարաբերություններում գոյություն ունեցող լարվածությունը:

գ. Հայերը որպես պոտենցիալ զոհեր (անպատժելիություն և կոտորածների ավանդույթ)

Օսմանյան կայսրությունն ուներ քաղաքական խնդիրները բռնությամբ, ընդհուպ մինչև կոտորածների միջոցով լուծելու ավանդույթ: Այս մեթոդներն օգտագործվեցին հույների, սերբերի, բուլղարների, ասորիների և հայերի[12], ինչպես նաև կայսրության այլ փոքրամասնությունների պարագայում: Երիտթուրքերը շարունակեցին այս քաղաքականությունը:

Հայկական կոտորածների ավանդույթն ուղեկցվում էր անպատժելիությամբ: Նրանց կազմակերպիչները և իրականացնողները միշտ մնում էին անպատիժ: Ավելին, նրանցից շատերը ներգրավվում էին սպանությունների հաջորդ շրջանի: Ուշագրավ է Ադանայի՝ 1909 թ. կոտորածներին մասնակից 42 թուրքի դեմ առաջադրված մեղադրանքի[13] նկատմամբ վերաբերմունքը: Թեև նրանք կոտորածների

---

[10] Տե՛ս մասնավորապես Göçek Fatma Müge, “Reading Genocide: Turkish Historiography on 1915,” in *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, Norman M. Naimark, Oxford: Oxford University Press, USA, 2011, pp. 58-60: Շատ փաստաթղթեր կարելի է գտնել հետևյալ աղբյուրում՝ *Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, 1892-93.* Turkey, No. 3 (1896), London, 1896; *Геноцид армян в Османской империи: сборник документов и материалов*, (Сост.: М. Г. Нерсисян, Р.Г. Саакян). 2-е изд., Под ред. Нерсисян М.Г., Ереван: изд. “Айастан”, 1982:

[11] Տե՛ս Adalian R., *Remembering and Understanding the Armenian Genocide*, Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2008, էջ10:

[12] Տե՛ս մասնավորապես *The Massacres of Chios Described in Contemporary Diplomatic Reports,* ed. by Argenti Philip P., London: John Lane the Bodley Head Ltd, 1932; Morison W. A., *The Revolt of the Serbs against the Turks, 1804-1813: Translation from the Serbian National Ballads of the Period*, Cambridge: Cambridge University Press, 2012’ Reid James J., “Batak 1876: A Massacre and Its Significance,” *Journal of Genocide Research 2*, no. 3 (2000), pp. 375-409; Khosroeva Anahit, “Assyrian Genocide in the Ottoman Empire and Adjacent Territories,” in *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, ed. by Richard Hovannisian, New Brunswick, New Jersey: Transaction Publishers, 2007, pp. 267-274:

[13] Տե՛ս Kévorkian Raymond, *The Armenian Genocide: A Complete History*, London and New York: I.B.Tauris, 2011, էջ 111:

հիմնական պատասխանատուները չէին, այլ երկրորդական մասնակիցներ, թուրքական հանրային կարծիքը դատավճիռը թշնամանքով ընդունեց, քանի որ այն աննախադեպ էր: Ինչպես նշում է ցեղասպանագետ Վ.Դադրյանը, անպատժելիությունը և պատժի անհնարինությունը դառնում են հիմնական գործոններ, որոնք բերում են անպաշտպանության և «ստեղծում են բոլոր պայմանները վտանգավոր խոցելիության համար, ինչն իր հերթին խրախուսում էր հավանական ոճրագործներին»[14]:

Սոցիալական քարոզչություն

Նույնիսկ գոյություն ունեցող «մշակութային արմատների» պայմաններում ցեղասպանական գաղափարախոսության ձևավորումը նպատակաուղղված պետական քաղաքականության արդյունք էր: Հայոց ցեղասպանությունը մարդկանց ուղղորդելու մանրակրկիտ մշակված և իրագործված մի նախագիծ էր: Օսմանյան կառավարիչների կողմից իրականացված հանրային քարոզչության արդյունքում ստեղծվեց հայերի՝ որպես «ներքին թշնամիների» կերպարը:

Բնակչության համախմբման համար նախաձեռնված «ներքին թշնամիների» փնտրտուքի հայտնի գործընթացն ուժգնանում է կայսրությունների անկման շրջանում[15]: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքական կուսակցությունը չկարողացավ կանխել Օսմանյան կայսրության շարունակական թուլացումը: Բալկանյան և Տրիպոլիտանական պատերազմների ընթացքում տարածքային կորուստներն ուժգնացրեցին հիասթափության մթնոլորտը: Անհրաժեշտ էր թիրախ, որի վրա կուղղվեր այդ դժգոհության և հիասթափության զգացումը: Քրիստոնյաները ներկայացվեցին իբրև այդ անհաջողությունների հիմնական մեղավորներ: Հասարակության մեջ անգրագիտության չափազանց բարձր մակարդակը և քրիստոնյաների նկատմամբ գոյություն ունեցող կասկածամտությունն այս քաղաքականությունն արդյունավետ դարձրին:

1909 թ. Ադանայի կոտորածները, սակայն, 1914 թ. հայկական բարենորոգումների ծրագրի հռչակման հետ միասին, մինչև Առաջին աշխարհամարտն ընկած տարիները հայերի նկատմամբ խոր թշնամանքի միջավայրը դարձրին առավել ընդգծված ու ավելի տեսանելի: Հակահայկական քարոզչությունը տարածվում էր երիտթուրքական տեղական ակումբների և մզկիթների ցանցի միջոցով: Հայերի բնաջնջումը սկսեց ընկալվել իբրև միակ լուծում:

ա. Հայերն իբրև հարարահարիչներ

XIX դարի օսմանյան առևտրի աճի պայմաններում կայսրությունում զարգացում ապրեց քրիստոնյաների ձեռնարկատիրական միջին խավը: Որպես արդյունք այն

---

[14] Dadrian Vahakn N., "The Agency of "Triggering Mechanisms" as a Factor in the Organization of the Genocide against the Armenians of Kayseri District," *Genocide Studies and Prevention*, vol. 1, no. 2, 2006, p. 115.

[15] Տե՛ս, օրինակ՝ Akçam Taner, *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide*, London: Zed Books, 2004, pp. 39–58.

ավելացրեց իր հարստությունը և ավելի ինքնավստահ դարձավ՝ հիմնելով նաև համայնքային հաստատությունների ամբողջ ցանց՝ դպրոցներ, սրճարաններ, բարեգործական կազմակերպություններ, մարզական ակումբներ և այլն: Քրիստոնեական համայնքների հարստության և տնտեսական կարգավիճակի տեսանելի վերելքը դարձավ մահմեդականների շրջանում բացասական վերաբերմունքի աճի պատճառ[16]:

Նման պայմաններում թուրքական վերնախավը հաճախակի ընդգծում էր հայ բնակչության զգալի տնտեսական կշիռը: Լինելով ճնշված փոքրամասնություն ու դուրս մնալով օսմանյան ռազմական և մեծապես քաղաքական ծառայությունից (որոշ բացառություններ արվում էին թարգմանիչների համար)՝ հայերն ունեին մեծ ազդեցություն օսմանյան տնտեսության որոշ հատվածներում՝ ֆինանսների, առևտրի, իսկ ավելի ուշ նաև արդյունաբերության ճյուղերում: Մեկ այլ պատճառ էլ ֆինանսական հարցերում իսլամում գոյություն ունեցող որոշ սահմանափակումներն էին, ինչը թույլ էր տալիս ոչ մուսուլմաններին ուժեղ դիրքեր զբաղեցնել բանկային ոլորտում:

Ոչմուսուլմանական կապիտալը գերիշխող դիրք ուներ կայսրության տնտեսական կյանքում: Հույներին էր պատկանում արտադրական և արհեստագործական ոլորտների բիզնեսի գրեթե 50%-ը: Նրանք վերահսկում էին բոլոր ներպետական ֆինանսական գործարքների ավելի քան 40%-ը: Հաջորդը հայ գործարարները՝ առևտրականները և ֆինանսիստներն էին, որոնք վերահսկում էին արտադրության և առևտրի մոտ 25%-ը: Նրանց հաջորդում էին հրեաներն ու լևանտացիները[17]:

Հայերի կշիռը զգալի էր նաև գյուղատնտեսության և արհեստների մեջ: Հայերի տնտեսական հաջողությունները նրանց դարձրին նախանձի և թշնամանքի առարկա, նրանք սկսեցին ընկալվել իբրև տնտեսական պորտաբույծներ, ովքեր հափշտակում են օսմանյան հողն ու հարստությունը: Ստեղծվել էր հայերի՝ որպես մուսուլմաններին շահագործողների քարոզչական կերպար:

բ. Հայերը որպես մրցակիցներ

1908 թ. սահմանադրության վերագործարկումից հետո հայերը տնտեսական սպառնալիքի հետ մեկտեղ սկսեցին ընկալվել որպես մրցակիցներ քաղաքական և մշակութային ոլորտներում: Թանզիմաթի բարեփոխումներից և հատկապես 1878 թ. Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության օրակարգում հայտնվելուց հետո հայերը հետզհետեքաղաքականապես ավելի ակտիվ էին դառնում: Նրանց շփումները եվրոպական գաղափարներին ու շարժումներին, հիմնականում եվրոպական և ամերիկյան միսիոներների կողմից հիմնադրված դպրոցների և եվրոպական մայրաքաղաքներ այցելությունների միջոցով, ներշնչեցին նրանց եռանդով ու այն հնարավորություններով, որ տալիս էին XIX-րդ դարի զարգացում-

---

[16] Տե՛ս Zürcher Erik J., *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, London, I. B. Tauris, 2010, p. 68.

[17] Տե՛ս Инджикян Оганес, *Буржуазия Османской империи*, Ереван: Изд-во АН АрмССР, 1977:

ները[18]: Հայերը կուսակցություններ հիմնադրեցին և սկսեցին պահանջել ավելի մեծ ինքնավարություն և քաղաքական իրավունքներ կայսրության շրջանակներում:

1908 թվականին երիտթուրքական հեղափոխությունը և սահմանադրության վերահաստատումը հայ բնակչությունն ընկալեց որպես գործիք Օսմանյան կայսրությունում սեփական ժողովրդի սոցիալական պայմանները թեթևացնելու և իրենց իրավունքներն ու հնարավորություններն ընդլայնելու համար[19]: Նրանք չափազանց ոգևորված էին սահմանադրությամբ տրվող հնարավորություններով, այն դեպքում, երբ մուսուլմաններն ակնկալվող բարեփոխումները համարում էին անընդունելի, հատկապես երբ այն փորձում էր բարձրացնել քրիստոնյաների սոցիալական կարգավիճակը: Արդյունքն ընդամենը թուրքական բնակչության նախանձն ու խոր ատելությունն էր: Այսպես, 1909 թ. հունվարի 19-ի մի զեկույցում Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովևին հաղորդում է հետևյալը. «Հոչակված ազատություններով հայերի հրապուրվելն ավելի ու ավելի է գրգռում մուսուլմանների ատելությունը նրանց դեմ: Նույնիսկ առավել առաջադեմ երիտթուրքերի մեջ, որոնք դեռ վերջերս այնպես բացահայտորեն իրենց երախտագիտությունն էին հայտնում հայերին՝ Թուրքիայում ազատագրական շարժման նախաձեռնողներ լինելու համար: Անվստահությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրեցօր, այլ՝ ժամեժամ»[20]:

Երիտթուրքական կուսակցությունը գաղտնի հսկողություն էր հաստատել հայկական ակտիվիստների նկատմամբ և հրամայեց իր գործակալներին օգտագործել խիստ միջոցներ, եթե անհրաժեշտություն առաջանա[21]:

Հնչակյան կուսակցության ղեկավարներից մեկը՝ Ստեփանոս Սապահ-Գուլյանը, իր հուշերում անդրադառնում է Մարզվանի քաղաքապետի ընտրություններին, որոնք տեղի ունեցան արդեն սահմանադրության վերականգնումից հետո: Հայերի թեկնածուն հաղթեց, բայց նրա հաղթանակը վիճարկվեց: Թեև հետաքննությունից հետո ընտրությունների արդյունքները հաստատվեցին, Սեբաստիայի վալին անվավեր ճանաչեց դրանք: Վալին այս մասին ցուցումներ էր ստացել երիտթուրքական կուսակցության Կենտրոնական կոմիտեից: Պատճառը հայտարարվել էր, որ նման պաշտոնները չպետք է դեռևս տրվեն հայերին, քանի որ մահմեդական բնակչությանը այդ արդյունքը կարող է գրգռել[22]:

Հայերի մրցունակությունը կանխելու ձգտումը տեսանելի էր յուրաքանչյուր ոլորտում: Խորհրդարանի պատգամավոր Վահան Փափազյանն իր հուշերում գրում

---

[18] Տե՛ս Weitz Eric D., *A Century of Genocide: Utopias of Race and Nation*, Princeton, NJ: Princeton University Press, 2003, էջ 3:

[19] 1876 թ. սահմանադրությունը (Kanûn-u Esâsî) վերագործարկվեց 1908 թ.: Դա Օսմանյան կայսրության առաջին սահմանադրությունն էր և գործեց երկու տարի՝ 1876-1878:

[20] АВПРИ Архив внешней политики Российской империи, Посольство в Константинополе, д. 2677, с. 17, ըստ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու,* խմբագրությամբ Մ. Գ Ներսիսյանի, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, «Հայաստան», 1991, էջ 230:

[21] Նույն տեղում:

[22] Տե՛ս Kévorkian R., *The Armenian Genocide…*, էջ 127:

է երիտթուրքական բոլոր տարածաշրջանային ակումբներին 1911թ. հոկտեմբերին ուղարկված գաղտնի շրջաբերականների մասին, որոնք պահանջում են բոլոր միջոցներով սահմանափակել հայկական առաջընթացն ազգային, կրթական և տնտեսական ոլորտներում և ուշադրության կենտրոնում պահել քաղաքական կուսակցությունների գործունեությունը և կազմակերպվող միջոցառումները[23]:

Նույնիսկ Օսմանյան կայսրության սպորտի և ֆիզիկական կրթության ոլորտում, փորձեր են արվում սահմանափակելու հայերի մրցունակությունը: Երիտթուրքերի կողմից ստեղծվել էին սպորտային ակումբներ՝ փոքրամասնությունների ակումբներում արձանագրված հաջողությունների դեմ պայքարելու համար[24]:

գ. Հայերը որպես ռուսական/արևմտյան գործակալներ կամ իբրև դավաճաններ

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից և 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո թուրքերը սկսեցին մեղադրել հայերին ռուսների գործակալներ և Արևմուտքի վստահված անձինք լինելու մեջ, քանի որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը պարտադրում էր վարչական բարեփոխումներ իրականացնել օսմանյան կառավարման ներքո գտնվող հայկական մարզերում, մեծ տերությունների վերահսկողության ներքո: Մեծ տերությունները փորձեցին օգտագործել այս դրույթը, ինչպես նաև Հայկական հարցն ընդհանրապես Օսմանյան կայսրության նկատմամբ ճնշում գործադրելու համար: Օսմանյան իշխանությունները վախենում էին, որ իրենց իշխանությունը հայտնվել է վտանգի տակ հայերի ենթադրյալ դավաճանության պատճառով: Այս մտքերն ավելի էին ուժեղանում 1914 թ. Մեծ տերությունների և հատկապես հայկական վիլայեթներում Ռուսաստանի նախաձեռնած բարեփոխումների ծրագրի մեկնարկից հետո: Այս յուրատեսակ վախը դարձել էր ծայրահեղ վտանգավոր Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո և ակտիվանում էր հետագա յուրաքանչյուր թուրքական ռազմական ձախողման հետևանքով (հատկապես 1915 թ. հունվարին, երբ Էնվերը Սարիղամիշում կրած ամոթալի պարտությունից հետո հայերին մեղադրեց ռուսների հետ ռազմական համագործակցության մեջ):

«Հայկական դավաճանության» թեզն ակտիվորեն օգտագործվեց լրատվամիջոցների կողմից տարվող քարոզարշավի ժամանակ: Հոդվածները պիտակավորում էին հայերին իբրև ռուսների «հանցակիցների» և մեղադրում նրանց Կովկասում մահմեդական բնակչության դեմ կատարված հանցագործությունների մեջ, ինչպես նաև 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Բալկաններում իբր թե իրականացրած վայրագությունների մեջ: Այս «ներքին թշնամու» և «հայկական դավաճանության» կարծրատիպն օգտագործվում էր հասարակ բնակ-

---

[23] Տե՛ս Վ. Փափազյան, նշվ. աշխ., II, էջ 161:

[24] «Ալթայ» մարզական ակումբը ստեղծվեց 1914 թ. հունվարի 16-ին երիտթուրքական կուսակցության անդամները և Նազըմը՝ Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից մեկը 1916 թ. գլխավորում էր մեկ այլ մարզական ակումբ՝ «Ֆեներբախչեն», տե՛ս Դեմոյան Հայկ, *Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում*, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2009:

չությանը հայերի մարմնավորած սպառնալիք լինելը մատուցելու և դրանով բազմության հավաքագրումը կոտորածներին հեշտացնելու համար, քանի որ կարիք կար «կանխելու հայերի կողմից նախատեսվող դավադրությունը, որով հայերը նպատակ էին հետապնդում միանալու Ռուսաստանի իրենց եղբայրներին և կոտորելու մուսուլմաններին»[25]: Այս միջավայրում հայերի կողմից կազմակերպված մի քանի դիմադրական գործողություններն օգտագործվեցին որպես անհավատարմության ու հեղափոխության նախապատրաստման «ապացույցներ»: Իրականում, սակայն, հայական բնակչության մեծամասնության հավատարմությունն ակնհայտ էր[26]:

Հայկական համայնքի ղեկավարները, ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր, փորձում էին կանխել սադրանքները, ինչպես նաև խրախուսում էին հայ երիտասարդներին իրականացնել իրենց պարտքն օսմանյան հայրենիքի նկատմամբ: Հազարավոր հայ զինվորներ արիություն ցուցաբերեցին Առաջին աշխարհամարտի ճակատներում օսմանյան բանակի շարքերում: Հայերի մեծ մասը մնացին օսմանյան հայրենիքի չքաղաքականացված հայրենասերներ: Այն տեղերում, որտեղ հանդիպում էր հայերի դիմադրությունը, դրանք տեղայնացված, հուսահատ և կոտորածներին ի պատասխան իրականացված ճիգերն էին[27]:

Հնարավոր հայկական ապստամբությունների վախը և հայկական անհուսալիության վերաբերյալ քարոզչությունն օգտակար էին նաև երիտթուրքերի հակահայկական գործողություններն իրենց դաշնակիցների աչքերում հիմնավորելու համար: Դիմադրության և ռուսների հետ համագործակցության ընդգծումը թույլ էր տալիս փոխակերպել անմեղ մարդկանց կոտորածը ռազմավարական խնդրի լուծման:

Դաժանության ռացիոնալացումը

Քարոզչությունը և թշնամու կերպարի ստեղծումը, իհարկե, շատ կարևոր և անհրաժեշտ քայլեր են ատելություն սերմանելու համար, բայց ոչ բավարար մարդկանց ցեղասպան գործողությունների մղելու համար: Ցեղասպանության ճարտարապետները պետք է նրանց ուժեղ, համոզիչ հիմնավորում տրամադրեն ցեղասպանական գործողություններ իրականացնելու համար:

Դաժանության ռացիոնալացման ժամանակ ղեկավարները հանդես են գալիս որպես հմուտ հոգեբաններ, ովքեր մանիպուլացնում են մարդկանց՝ օգտագործելով հնարքներ նրանց կրքերի և սպանելու պատրաստակամությունն արթնացնե-

---

[25] Տե՛ս Kévorkian R., The Armenian *Genocide*…, էջ 303:

[26] Տե՛ս, օրինակ՝ վկայություններ Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունից (Gust Wolfgang (Ed.),*The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916,* New York: Berghahn Books, 2013, էջ 56-59):

[27] Տե՛ս Levene Mark, *Genocide in the Age of the Nation State: Volume 1: The Meaning of Genocide,* London: I. B. Tauris, 2008, p. 73; Trumpener Ulrich, *Germany and the Ottoman Empire 1914–1918,* Princeton, NJ: Princeton University Press, 1968, էջ 202, 203:

լու համար: Ինչպես գրում է ամերիկացի ուսումնասիրող Վեյցը. «Նրանք ցեղասպանությունը համաժողովրդական, պոպուլյար միջոցառման են վերածում»[28]: Այդ մանիպուլյատիվ հնարքներից է մեծ գործողության մաս լինելու, սեփական նշանակալիության և պատմական իրադարձության ներգրավվածության զգացում ներարկելը: Միևնույն ժամանակ հնարավոր անձնական տնտեսական օգուտներ ստանալու հնարավորությունը նույնպես խրախուսում էր բնակչության մեծ զանգվածների մասնակցությունը սպանության գործընթացին:

ա. Ուտոպիական «Մեծ» գաղափարի օգտագործումը

Դաժանության հիմնավորման ձևերից մեկն ուտոպիստական գաղափարի հռչակումն էր: Մարդկանց մղում են զանգվածային սպանություններին մասնակցելու՝ դրա դիմաց առաջարկելով դառնալ մեծ և կարևոր գործողության, հաճախ նույնիսկ ուտոպիստական նախագծի մաս, ինչը նրանց կարևորության և «պատմական իրադարձության» մեջ ներգրավվածության զգացում էր հաղորդում:

Հայոց ցեղասպանության իրականացման ժամանակ նման գաղափարներից էր պանթուրքիզմը: Ջիյա Գյոքալփի և Յուսուֆ Աքչուրայի առաջարկած գաղափարախոսությունը կոչ էր անում ոչնչացնել հայերին և այդ միջոցով ջնջել խոչընդոտը մեծ ռազմավարության ճանապարհից: Նպատակը Մեծ Թուրանի կառուցումն էր, մի գերկայսրության, որը պետք է միավորեր բոլոր թուրքերին և թուրքախոս ժողովուրդներին Անատոլիայից մինչև Կենտրոնական Ասիա[29]:

Ըստ պանթուրքիզմի[30] գաղափարախոսների՝ հայերը հայտարարվեցին «անհնազանդ տարրեր», խոչընդոտ միասնական թուրքական պետության կառուցման ծրագրերի համար, քանի որ հայերի հայրենիքը կիսում էր երևակայական պանթուրանական պետությունը՝ Փոքր Ասիայի և Միջին Արևելքի թուրքախոս ժողովուրդներին Կովկասում և Կենտրոնական Ասիայում ապրող ազգակիցներից: Սկզբնական շրջանում հայկական տարածքի թուրքականացումը պետք է իրականացվեր մշակութային և լեզվական «թուրքացման» միջոցով[31]: Սակայն այս փորձերի տապալումից հետո խնդրի լուծման միջոց ընտրվեց ֆիզիկական ոչնչացումը: Այսպիսով, մեծ նախագծի իրականացման համար հայերը դատապարտվեցին ոչնչացման: Պատերազմն ընդամենը ստեղծեց հնարավորություններ և դրա համար միջոցներ ու հնարավորություններ ընձեռեց:

բ. «Հայրենիքի փրկության» գաղափարի շահարկումը

---

[28] Weitz Eric D., *A Century of Genocide…*, p. 6.

[29] Տե՛ս Naimark Norman M., *Fires of Hatred: Ethnic Cleansing in Twentieth-Century Europe*, Cambridge: Harvard University Press, 2002, էջ 25–28:

[30] Պանթուրքիզմի մասին տե՛ս օրինակ Landau Jacob, *Pan-Turkism: From Irredentism To Cooperation*, Indiana University Press, 1995, Еремеев Д. Е. *Этногенез турок*, М., 1971; Надеин-Раевский, В.А. *Пантюркизм: миф или реальность: исследование идеологии и политики современного пантюркизма*, М.: Изд-во РАН, 1995:

[31] Տե՛ս Dadrian Vahakn N., *Warrant for Genocide: The Key Elements of the Turko-Armenian Conflict*. Second Edition, New Brunswick, NJ: Transaction Books, 1999, էջ 97,98:

Հայոց ցեղասպանության ծրագրի հեղինակները շահարկում էին նաև օսմանցիների հայրենասիրական զգացումները: Նրանք հայտարարում էին, որ հայրենիքը վտանգի մեջ է, և յուրաքանչյուր իսկական մուսուլմանի պարտքն է մասնակցել «Հայրենիքի փրկության» գործին: Դա նշանակում էր «մաքրել» երկիրն օտար, թշնամի տարրերից՝ հայերից, հույներից և ասորիներից:

Սա ժողովուրդների միջև զրոյական գումարով խաղի (անգլ.՝ zero sum game) սկզբունքների վրա հիմնված յուրատեսակ մի սոցիալ-դարվինիստական տեսություն էր, որի համաձայն պետության և ազգի գոյատևումն իբր պահանջում է Արևմտյան Հայաստանի ավելի միատարրացում[32]:

Հայերի ժողովրդագրական կշիռը նվազեցնելու փորձերը՝ օսմանյան կառավարիչների կողմից մարդահամարների մշտական կեղծումները, պարբերական կոտորածները, հայկական բնակավայրերում Կովկասից և Բալկաններից եկող մուհաջիրների բնակեցումը, ինչպես նաև բռնի թուրքացումը նույն նպատակն էին հետապնդում:

Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի (թուրքական տերմինաբանությամբ՝ Անատոլիայի) փոխակերպումը «Թուրքական հայրենիքի» ուժգնանում էր այն հանգամանքով, որ երիտթուրքական առաջնորդներից, ինչպես նաև Հայոց ցեղասպանության անմիջական կազմակերպիչներից շատերն ազգությամբ թուրքեր չէին: Հայ ուսումնասիրող Արսեն Ավագյանը շեշտադրում է «Թեշքիլաթ Մահուսե»-ի առաջնորդների չերքեզական արմատները[33]: Ավելին, երիտթուրքական առաջնորդներից շատերը ներգաղթել էին Բալկաններից և գտնվում էին նոր հայրենիքի փնտրտուքի վիճակում: Նրանք ընտրեցին Անատոլիան[34]: Իսկ Բալկաններում և Կովկասում քրիստոնյաների հետ փոխհարաբերությունների նրանց դառը փորձը հայերի նկատմամբ ատելություն էր ձևավորում: Բալկանների օրինակով Արևելյան Անատոլիան (այսինքն՝ Արևմտյան Հայաստանը) կորցնելու վախը թելադրում էր հայերից և այլ օտարազգի տարրերից տարածքը մաքրելու անհրաժեշտությունը:

Եվ այս ամենը քողարկվում էր «Հայրենիքի փրկության» կարգախոսով: Պատահական չէ, որ հետագայում հենց այս բառերն էին օգտագործում ոճրագործները՝ իրենց հանցագործությունն արդարացնելու համար: Այսպես, Դիարբեքիրի ոճրագործ նահանգապետ Մեհմեդ Ռեշիդն իր հուշերում արդարացնում էր հայերի տեղահանության որոշումը՝ փորձելով ժխտել իր դեմ առաջադրվող մեղադ-

---

[32] Տե՛ս Suny Ronald Grigor, “Writing Genocide: The Fate of the Ottoman Armenians,” in *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, Norman M. Naimark, Oxford: Oxford University Press, USA, 2011, էջ 34, 35:

[33] Հատուկ կազմակերպությունն իր գոյության ընթացքում ունեցել է երեք ղեկավար, և նրանք բոլորն ազգությամբ չերքեզներ էին՝ Սուլեյման Ասքերին (ստեղծման պահից մինչև 1915թ. ապրիլի 14-ը), Ալի Բաշամփան (1915, մայիսի 24-ից – 1918 թ. հոկտեմբերի 31-ը), Հյուսամեթին Էրթուրքը (1918 թ. դեկտեմբերի 5-ը) տե՛ս Авакян Арсен, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ереван, Музей-институт Геноцида армян, 2013:

[34] Երիտթուրքական հեղափոխությունից հետո Անատոլիայի նկատմամբ աճող հետաքրքրության մասին տե՛ս Zürcher Erik J., *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk’s Turkey*, London and New York: I. B. Tauris, 2010, p. 120-121:

ռանքները՝ բացատրելով իր գործողությունները «Հայրենիքին մատուցվող ծառայությամբ»[35]:

գ. Տարեսական օգուտներ

Պատմաբան Ադամ Ջոնսը ցեղասպանություն իրականացնողին խրախուսող էական հոգեբանական տարր է նշում «ագահությունը»[36]: Հայկական ունեցվածքին տիրանալու ձգտումը և ցեղասպանությանն ուղեկցող հսկայական չափերի հասնող կողոպուտը դառնում էին հայկական բնակչության ոչնչացման ռացիոնալացման հիմնական բաղադրիչներից մեկը: Հայկական ունեցվածքը, գույքը, ապրանքները և նյութական այլ հարստություններն առգրավվեցին ու վերաբաշխվեցին կայսրության մուսուլման բնակչության միջև:

Իհարկե, կողոպուտի հիմնական բաղադրիչը հենց հարստանալու հնարավորությունն էր, սակայն ցեղասպանության հիմնական կազմակերպիչները փորձում էին «Մեծ գաղափար» ներդնել նույնիսկ այս թալանի մեջ: Պանթուրքիզմի գաղափարախոսներ Գյոքալփի և Աքչուրայի կողմից զարգացվեց «ազգային» (թուրքական) տնտեսության ստեղծման գաղափարը: Աքչուրան հավատում էր, որ «…եթե թուրքերը ձախողվեն բուրժուական դասի ստեղծման մեջ […], միայն գյուղացիներից և պաշտոնյաներից կազմված թուրքական հասարակության գոյատևման հնարավորությունները շատ փոքր են»[37]:

Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած թուրքական բուրժուազիան իր մեկնարկային կապիտալը կուտակեց հենց հայկական ունեցվածքի ուղղակի բռնագրավման միջոցով:

1915 թ. մայիսին հրապարակվեց «Վարչական ցուցումներ պատերազմի և արտակարգ քաղաքական պայմանների պատճառով տեղահանվող հայերի լքյալ գույքի վերաբերյալ» դեկրետը, որը թույլ էր տալիս թուրքական պաշտոնյաներին տիրանալ հայերի ունեցվածքին[38]: Նրանք զավթեցին ամենահարուստ հայկական տները: Հասարակ մուսուլման բնակչությունը նույնպես ձեռք բերեց նոր կարողություններ ՝ թալանելով իրենց հայ հարևանների տները և շարժական գույքը[39]:

---

[35] Տե՛ս Dr. Reşid'in Bey'in Hatiralari. "Sürgünden İhtihara", Yayina Hazirlayan Ahmet Mehmetefendioğlu, İstanbul, ARBA, 1993. s. 43-70: Մեջբերվում է ըստ՝ Արսեն Ավակյան, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ереван, Музей-институт Геноцида армян, 2013:

[36] Մյուս բաղադրիչներն են նարցիսիզմը, վախը և ստորացումը: Տե՛ս Jones Adam, *Genocide: A Comprehensive Introduction*, London: Routledge, 2010, p. 262.

[37] Türk Yurdu, no. 140, Aug. 12, 1333/Aug. 25, 1916, 2521ff: Մեջբերվում է ըստ՝ Libaridian Gerard J., "What was Revolutionary about Armenian Revolutionist Parties in the Ottoman Empire?," in *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, Norman M. Naimark, Oxford: Oxford University Press, 2011, p. 124.

[38] Kouymjian Dickran, *Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process*, Cf http://armenianstudies.csufresno.edu/faculty/kouymjian/articles/confiscation.htm#foot_out_01.

[39] Մանրամասն տե՛ս Üngör Uğur Ümit, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London: Continuum, 2011:

Ապամարդկայնացումը և դաժանության կառուցումը: Հեշտացնելով սպանության գործընթացը:

Դարավոր կարծրատիպերն ուղեկցում են զոհերի ապամարդկայնացման գործընթացը: Պրոֆ. Գրեգորի Սթենթոնը նկարագրել է «ապամարդկայնացման» գործընթացը որպես ցեղասպանության փուլերից մեկը: «Մեկ խումբը հերքում է մյուս խմբի մարդկային հատկանիշները: Այդ խմբի անդամները հավասարեցվում են կենդանիների, վնասատուների, միջատների և հիվանդությունների: Ապամարդկայնացումը հաղթահարում է մարդկային բնականոն զզվանքն ընդդեմ սպանության»[40]:

Ապամարդկայնացումից հետո զոհերն այլևս չէին ընկալվում որպես մարդկային էակներ: Մորգենթաուն նշում էր, որ տարածված եզրը, որ կիրառվում էր թուրքի կողմից քրիստոնյաի հասցեին, «շունն» էր, և նրա գնահատմամբ սա ոչ միայն հռետորական անվանում էր: Թուրքը փաստորեն քրիստոնյա դրացի ժողովուրդներին դիտարկում էր պակաս արժանի, քան իր ընտանի կենդանիները[41]: Ռուսական արքունի խորհրդական Ալ. Լևիցկին հաղորդում էր. «… մուսուլմանների ատելությունը նրանց [հայերի] հանդեպ չի դադարում, և ամեն առիթով «գյավուր» հայհոյանքի հետ մեկտեղ, այդ ատելության դրսևորումը, մանավանդ գյուղերում, երևում է այն խոսքերում, որ «սպիտակ թե սև շուն» - իրենց համար մեկ է, այսինքն՝ հույների թե հայերի, միևնույն քրիստոնյաներն են»[42]:

Ցեղասպանության կազմակերպիչներից մեկը երիտթուրք բժիշկ, Դիարբեքիրի նահանգի վալի Մեհմեդ Ռեշիդը, հայտարարում էր. «Հայ դավաճանները գտել են իրենց տեղը հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրէներ են»:[43] Նման բժշկական եզրույթների օգտագործումը՝ որպես հայկական համայնքի համատարած ոչնչացման հիմնավորում, չափազանց տարածված էր: Ախտահանման և վիրաբուժական անդամահատման հայեցակարգը որպես միջոցներ հասարակությանը հիվանդության բուժման համար օգտագործելն ապամարդկայնացման գործընթացի տրամաբանական մասն էր[44]:

* * *

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ընթանում էին հասարակական գործընթացներ, որոնք թույլ տվեցին Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցություն ապահովել: Ձևավորվում էր հայերի, որպես ներքին թշնամիների կերպարը, ինչը խրախուսում էր օսման-

---

40 Stanton Gregory, “The Eight Stages of Genocide,” www.genocidewatch.org/aboutgenocide/8stagesofgenocide.html.

41 Տե՛ս Morgenthau H., *Ambassador Morgenthau’s* Story, էջ 276:

42 АВПРИ, Посольство в Константинополе, д. 3184, п. 146, ըստ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*, էջ 119:

43 Ըստ Dadrian Vahakn N., “The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians,” *Holocaust and Genocide Studies*, vol. 1, no. 2 (1986), p. 175.

44 Նույն տեղում, էջ 177:

յան կայսրության շարքային մուսուլման բնակչին ներգրավվել հայերին բնաջնջելու գործընթաց: Հիմնվելով հին նախապաշարումների վրա՝ հայերը իբրև «անհավատներ», «ստորադասներ» և «հնարավոր զոհեր», տարածվում էին նաև նոր քարոզչական կերպարներ՝ հայերը որպես «հարստահարողներ», «մրցակիցներ» և օտարներին՝ «ռուսներին և եվրոպացիներին աջակցողներ»: Դրան գումարվում էր սպանությունների գործընթաց ներգրավվելը իբրև մեծ գաղափարի մաս և Հայրենիքի փրկության անհրաժեշտություն ներկայացնելը, որը, ուղեկցվելով հայերի ապամարդկայնացումով, ավարտին էր հասցնում ցեղասպանական միջավայրի ձևավորումը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1908-1914ԹԹ.)

Սուրեն Մանուկյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում տեղի էր ունենում հայերի, որպես ներքին թշնամիների կերպարի ձևավորում, ինչը թույլ էր տալիս հրահրել մահմեդական բնակչությանը մասնակցելու հայերի բնաջնջման գործընթացին: Հին նախապաշարումներին՝ հայերը որպես «անհավատներ», «ստորադաս խավ» և «բռնության համար հնարավոր թիրախ», գումարվեցին նոր՝ հայերն իբրև «շահագործողներ», «թուրքական բնակչության համար մրցակիցներ» և «ռուսների ու եվրոպացիների դաշնակիցներ» քարոզչական պիտակավորումներ: Բացի այդ առաջ քաշվեցին սպանությունն արդարացնելու մի շարք հայեցակարգեր, որոնցում կարևոր տեղ էր զբաղեցնում «Հայրենիքի փրկության գաղափարը»: Այն իր հերթին ուղեկցվում էր կայսրության հայ բնակչության ապամարդկայնացման քաղաքականությամբ: Բոլոր այդ գործընթացների միահյուսումը նպաստավոր միջավայր ստեղծեց օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն իրականացնելու համար:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, զանգվածային մասնակցություն, ցեղասպանական միջավայրի ստեղծում, սոցիալ-հոգեբանություն, քարոզչություն, թշնամու կերպարի ստեղծում:

PREPARING TO GENOCIDE. CREATION OF GENOCIDAL ENVIRONMENT IN THE OTTOMAN EMPIRE (1908-1914)

Suren Manukyan

SUMMARY

On the eve of the First World War an image of Armenians as internal enemies was constructed, which allowed to incite the Muslim population of the Ottoman Empire and

involve them in the process of extermination of Armenians. Based on the old prejudices, such as Armenians as “infidels”, “subordinate” and “potential victims” new images such as “exploiters”, “competitors” and “Russian and European allies “ were introduced to the process of social-indoctrination. In addition, the concept of killing to “save the Homeland” was developed accompanied by the process of dehumanization of Armenian population of the Empire. All these processes constructed the necessary environment for the implementation of genocide.

Keywords: Armenian Genocide, mass participation, creation of genocidal environment, social-psychology, indoctrination, creation the image of enemy.

ПОДГОТОВКА К ГЕНОЦИДУ. ФОРМИРОВАНИЕ ГЕНОЦИДАЛЬНОЙ СРЕДЫ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (1908-1914)

Сурен Манукян

РЕЗЮМЕ

Накануне Первой мировой войны в Османской империи происходил процесс конструирования образа армян как внутренних врагов, что позволило вовлечь широкие массы мусульманского населения в процесс истребления армянского населения. На основе старых стереотипов, таких, как армяне - «неверные», «подчиненные» и «потенциальные жертвы» в процесс социально-идеологической обработки были введены новые образы, такие как армяне - «эксплуататоры», «конкуренты турецкого населения» и «союзники русских и европейцев». Кроме того, были разработаны несколько теорий, рационализирующих процесс убийств, в котором концепция «спасения Родины» занимала центральное место. Все это сопровождалось перманентной дегуманизацией армянского населения империи. Комплекс этих процессов создал необходимые условия для осуществления геноцида армянского населения Османской империи.

Ключевые слова: Геноцид армян, массовое участие, создание геноцидальной среды, социальная психология, пропаганда, создание образа врага.